ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

✆ 0256-2-14-75
էլ. փոստ:
loriberdhamaynq2017@mail.ru

04.02.2026թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

Լոռի Բերդ համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրազեկման փուլի արդյունքների ամփոփման նիստի

Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ

Ս. թ. փետրվարի 04-ին, ժամը՝ 12:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրազեկման փուլի արդյունքների ամփոփման նիստը: Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ՝ Էդուարդ Մելիքսեթյանը, նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Վահրամ Պապիկյանը, Մարգարիտա Հովսեփյանը, Մարինե Սահինյանը, Լիլիթ Առաքելյանը, Արմինե Ասուլյանը և Անահիտ Շահինյանը:

Հանձնաժողովի նախագահ Է. Մելիքսեթյանը նախ հայտնեց, որ ըստ պլան-ժամանակացույցի ավարտվել է մասնակցային բյուջետավորման իրազեկման փուլը և հակիրճ ներկայացրեց իրազեկման փուլում կատարված աշխատանքների վերաբերյալ: 02.02.2026 թվականին հանրային լսումներ են իրականացվել Լոռի Բերդ, Բովաձոր, Ուռուտ և Սվերդլով բնակավայրերում, իսկ 03.02.2026 թվականին՝ Լեջան, Ագարակ, Կողես և Յաղդան բնակավայրերում: Ծրագրի մեկնարկի և ընթացքի մասին տեղադրվել է համայնքապետարանի պաշտոնական կայքէջում և սոցիալական հարթակներում: Տպագրվել է թվով 100 բուկլետներ և բաժանվել բնակիչներին, ինչպես նաև փակցվել է հանրությանը տեսանելի վայրերում: Հանրային վայրերում կազմակերպվել է նաև փողոցային հանդիպումներ՝ բնակչությանը ծրագրին ներգրավվելու համար:

Նիստի վերջում հանձնաժողովի անդամները մասնակցային բյուջետավորման իրազեկման փուլը գնահատեցին դրական, իսկ հանձնաժողովի նախագահ՝ Էդուարդ Մելիքսեթյանը ըստ պլան-ժամանակացույցի հայտարարեց առաջարկների ներկայացման փուլի սկիզբը:

Հանձնաժողովի նախագահ _____ Է. Մելիքսեթյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Մ. Սահինյան